

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ\_ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն Հ.Պապոյան**

**Ֆինանսատնտեսագիտական բաժին Ն.Ասրյան (6 մասնագետ)**

իրականացնում է բաժնի գործառույթների համակարգման և ամփոփման աշխատանքները, ամենօրյա հսկողություն համայնքների եկամուտների կատարման նկատմամբ, սպասարկում է Ստեփանավանի տարածաշրջանի և Թումանյանի տարածաշրջանի 11 համայնքներին

**գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյան** Սպասարկում է Սպիտակի տարածաշրջանի համայնքներին, նաև գնումների համակարգողն է և իրականացնում է գնումների գործընթացին առընչվող գործառույթները

**առաջատար մասնագետ Մուշեղ Գրիգորյան** Սպասարկում է Գուգարքի տարածաշրջանի և Թումանյանի տարածաշրջանի 10 համայնքներին, կազմակերպում է հողի հարկի և գույքահարկի անդորրագրերի ստացումն ու բաշխումը

**առաջատար մասնագետ Լուսինե Պապյան** Սպասարկում է Տաշիրի տարածաշրջանի համայնքների և Թումանյանի տարածաշրջանի 10 համայնքներին

**առաջատար մասնագետ Քրիստինե Հովսեփյան** մասնակցում է գնումների գործընթացին առընչվող աշխատանքներին և վարչական վերահսկողության աշխատանքներին

**կրտսեր մասնագետ Ադրինե Թաիրյան** իրականացնում է մարզպետարանի հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի վարման, տեղեկատվության մշակման աշխատանքներ

**Հաշվապահական հաշվառման բաժին Ա.Բեջանյան (7 մասնագետ, 1 պայմանագրային աշխատող)**

համակարգում է մարզպետարանի հաշվ.հաշվառման վարման, կրթության և մշակույթի ոլորտի ֆինանսավորման, առողջապահական ոլորտի ֆինանսատնտեսական վերահսկման, սոց. փաթեթի վարման և վարչական հսկողության աշխատանքները

**գլխավոր մասնագետ Շուշանիկ Ճճմարիտյան** մարզպետարանի ապարատի ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, հաշվ. հաշվառման վարում, հաշվետվությունների կազմում

**առաջատար մասնագետ Ժասմենա Գրիգորյան** Կրթության ոլորտի կազմ. ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, վերահսկողություն և համակարգում

**առաջատար մասնագետ Անուշ Խաչիկյան** Կրթության ոլորտի կազմ. ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, վերահսկողություն և համակարգում,

**առաջատար մասնագետ Անուշ Քառյան** Առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտի վերահսկողություն և համակարգում,

**կրտսեր մասնագետ Արմինե** Առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտի վերահսկողություն և համակարգում,

**առաջատար մասնագետ Նաիրա Սարգսյան** Մարզպետարանի ապարատի ֆինանսատնտեսական գործունեության ապահովում , գանձապահի պարտականքների կատարում

**պայմանագրային աշխատող Տարոն Մարտիրոսյան** Սոցիալական փաթեթի գծով անհրաժեշտ աշխատանքների իրականացում, գույքագրման փաստաթղթերի ընդունում

## Վարչության խնդիրն է

Ֆինանսների և սոցիալ-տնտեսական միասնական քաղաքականության ձևավորման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

Վարչության համար որպես աշխատանքների հիմք հանդիսացել է „ՀՀ Լոռու մարզի 2015-2018թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման և վարչության 2015թ. աշխատանքային ծրագրերը:

Վարչության գործառույթների իրականացումն ըստ բաժինների

# Ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից իրականացվել են հետևյալ գործառույթները

1. Մարզի համայնքների բյուջեների կատարման և բյուջետային գործընթացի վերահսկողություն, բյուջեների կազմման ուղղությամբ մեթոդական օգնության ցուցաբերում
2. Համայնքների բյուջեների կատարման , ՏԻՄ-երի և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների, ՀՈԱԿ-ների վերաբերյալ հաշվետվությունների և հաղորդումների ընդունում, ստուգում, ամփոփում, համայնքերի սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ ամենօրյա տեղեկատվության մշակում և ներկայացում մարզպետին, փոխմարզպետներին և ՏԻՄ վարչությանը
3. Մարզպետարանի հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի վարում, տեղեկատվության մշակում
4. Պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայի ելակետային տվյալների, սուբվենցիաների ծրագրերի ամփոփում և ներկայացում
5. Մարզպետարանի աշխատակազմի գնումների գործընթացի կազմակերպում, ինչպես նաև համայնքների և ՊՈԱԿ-ների գնումների գործընթացի աջակցում
6. Վարչական վերահսկողության ֆինանսական հատվածի ապահովում
7. Իրավական ակտերի, գույությունների նախագծերի կազմում

Վարչության ֆինանսատնտեսագիտական բաժինը տարվա ընթացքում ժամանակին կատարել է ՏԱՊ-ով և այլ հանձնարարականներով իր առջև դրված բոլոր խնդիրները:

Ընդունվել և ամփոփվել են մարզի համայնքների բյուջեները և դրանց կատարման վերաբերյալ ամսական և եռամսյակային հաղորդումները, տարեկան հաշվետվությունները, դրանք մարզպետին ու պետական այլ համապատասխան մարմիններին ներկայացնելու համար կազմվել են անհրաժեշտ տեղեկանքներ, հաշվետվություններ, հաղորդումներ և այլ փաստաթղթեր:

Կազմվել են մարզի, համապատասխան տարածաշրջանների համայնքների բյուջեների կատարման , ՏԻՄ-երի և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողներին վճարված աշխատավարձերի. ինչպես նաև՝ նախորդ տարիների աշխատավարձերի պարտքերի մարման վերաբերյալ ամենամսյա հաշվետվություններ:

Լոռու մարզի համայնքների բյուջետային հիմնարկներից, այդ թվում մանկապարտեզներից համայնքային բյուջե մուտքագրված գումարների, ՀՈԱԿ-ների թվաքանակի և առևտրային բանկերում բացված հաշվեհամարներում մուտքագրված գումարների, ինչպես նաև համայնքներում աղբահանություն իրականացնող կազմակերպությունների հաշվեհամարներին մուտքագրված գումարների վերաբերյալ և մարզի համայնքների հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող հարկատուների վերաբերյալ հավաքագրվել է ամսեկան տեղեկատվություններ և ներկայացվել Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Բաժնի աշխատակիցների կողմից ապահովվել է մարզպետարանի գնումների գործընթացի կազմակերպումն ու ապահովումը, որի շրջանակներում կազմակերպվել է էլեկտրոնային գնումներ և դրանց վերաբերող ամբողջական տեղեկատվությունը տեղադրվել [gnumner.am](http://gnumner.am) կայքում: Գնումների համակարգողի կողմից մարզային ենթակայության կազմակերպությունների գնումների վերաբերյալ հայտարարություններն ու գնման պայմանագրերը օրենքով սահմանված կարգով տեղադրվել է կայքում և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գնումներն իրակացվել են տարբեր ընթացակարգերով, որից՝

- բանակցային ընթացակարգ առանց հայտարարության /մեկ անձ/ - 31 ընթացակարգ
- շրջանակային համաձայնագրեր –7 ընթացակարգ
- պարզեցված ընթացակարգ – 1 ընթացակարգ
- բաց ընթացակարգ – 3 ընթացակարգ

- Գնման ընթացակարգերի արդյունքում կնքված բոլոր պայմանագրերը մուտքագրվել են <<GLIENT-TRESUARY>> - <<LSFinanse>> համակարգ և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացել դրական եզրակացություն:

- Սահմանված ձևաչափերով կազմվել է միջնաժամկետ ծախսային ծրագրերում և 2016 թվականի բյուջետային հայտում ընդգրկվող Լոռու մարզպետարանի գնումների անվանացանկը:

- Լոռու մարզպետարանի 2016 թվականի գնումների միասնական անվանացանկը վերջնական տարբերակով սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

„Գանձապետական գործառնական օր,, ծրագրի օգնությամբ ամենօրյա օպերատիվ տեղեկատվություն է ստացվել համայնքների բյուջեների մուտքերի վերաբերյալ, կատարվել համապատասխան վերլուծություններ:

Իրականացվել է համայնքների ղեկավարների կողմից ներկայացվող գույքային հարկերի անդորրագրերի և ծանուցագրերի վերաբերյալ հաշվետվությունների և հայտ-պահանջագրերի ընդունում: Ստացվել է 73000 հատ գույքային հարկերի անդորրագրեր և 15000 հատ հողի հարկի ծանուցագրեր, 7000 հատ գույքահարկի ծանուցագրեր, որը համայնքներին բաշխվել է ըստ համապատասխան հայտերի:

Ընդունվել են համայնքների կողմից ներկայացվող 2016թ. սուբվենցիաների հայտերը (ծրագրերը) ստուգվել, ամփոփվել և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն: Ընդհանուր առմամբ հայտ է ներկայացրել 4 քաղաքային համայնք, ընդամենը 13 ծրագիր 1 մլրդ. 513 մլն 889 հազ 700 դրամ գումարով:

2016թ. պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիա) ստանալու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացվող համայնքների ծրագրերը			
h/h	համայնքի անվանումը	Ծրագրի անվանումը	նախահաշվային արժեքը (հազ. դրամ)
1	ք. Վանաձոր	Քաղաքի գործարանային փողոցի թիվ 1 կամրջի նորոգում	40000.0
		Քաղաքի Հալաբյան փողոցի կամրջի նորոգում	100000.0

		<b>Քաղաքի ծանրամարտի մարզադպրոցի վերակառուցում</b>	<b>46652.2</b>
2	ք. Ալավերդի	<b>քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում</b>	<b>283,522.0</b>
		<b>Քաղաքի բազմահարկ շենքերի վերելակների նորոգում</b>	<b>12,890.0</b>
		<b>Քաղաքի Սանահին թաղամաս-Ակներ ճանապարհի փոսային նորոգում</b>	<b>36,000.0</b>
3	ք. Տաշիր	<b>Քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում</b>	<b>270,000.0</b>
		<b>Քաղաքի 18 բնակելի շենքերի տանիքների վերանորոգում</b>	<b>150,000.0</b>
		<b>Արտադպրոցական կենտրոնի վերակառուցում</b>	<b>50,000.0</b>
		<b>Ներքաղաքային փողոցների ասֆալտապատում</b>	<b>300,000.0</b>
4	ք.Ստեփանավան	<b>Քաղաքային մանկական զբոսայգու հիմնանորոգում և բարեկարգում</b>	<b>39,956.5</b>
		<b>Քաղաքի Միլիոնի փողոցի հիմնանորոգում</b>	<b>168,855.6</b>
		<b>Քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցի հատակների հիմնանորոգում</b>	<b>16,013.4</b>
<b>Ընդամենը</b>		<b>13 ծրագիր</b>	<b>1,513,889.7</b>

Բաժնի աշխատակիցները մասնակցել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին:

Կազմակերպվել իրականացվել է մարզպետարանի հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի վարումը, տեղեկատվության մշակումը և համակարգված տեղեկությունները տրամադրումը ՀՀ ՏԿՆ: Ընդունվել է պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով ՏԻՄ-երին տրամադրվող դոտացիաների ելակետային տվյալները, ամփոփվել ներկայացվել ՀՀ ՏԿՆ, ինչպես նաև համայնքներին է տրամադրվել դոտացիաների նախնական տվյալները բյուջեների նախագծերում նախատեսելու նպատակով:

Կազմակերպվել և իրականացվել է մարզի համայնքների բյուջեների եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման համար պահանջվող տեղեկատվության հավաքագրումը, ստուգումը և ամփոփումը ըստ համայնքների, ներկայացվել է ՀՀ ՏԿՆ:

Իրականացվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման և կազմման ֆինանսական հատվածի ապահովում և մարզպետին ներկայացվող սոցիալ-տնտեսական հարցերին վերաբերող փաստաթղթերի մասնագիտական (ֆինանսական) քննության իրականացումը, 2015թ-ի ՏԱՊ-ի կազմում և ՏԱՊ-ի մոնիտորինգի ծրագրի մշակումը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզպետի տարեկան հաշվետվության բաժնի հետ կապված նյութերի պատրաստում:

Պարբերաբար ըստ տարածաշրջանների քննարկումներ են կազմակերպվել համայնքների եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու նպատակով: Քննարկումները անց են կացրել մարզպետը և փոխմարզպետները:



2015թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

2015 թվականի ընթացքում համայնքային բյուջեների եկամուտների կատարման վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել նախորդ տարվա համեմատությամբ եկամուտների աճ: Մարզի համայնքների բյուջեներով 2015թ կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 100.0%-ով կամ նախատեսված 6418.5 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 6415.5 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 6164.7 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 1661.6 մլն. դրամ:

(հազար դրամ)


h/h	Եկամուտների անվանումը	2014թ. Բյուջե			2015թ. Բյուջե			2015թ-ի աճը 2014թ-ի նկատ. (%)	2015թ-2014թ-ի փաստ. նկատ. (%)
		այլան	փաստ.	կատ %	այլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	377348.7	337064.5	89.3	362828.6	335963.3	92.6	-1101.3	99.7
2	Գույքահարկ	547073.3	599324.2	109.6	629179.4	664149.6	105.6	64825.5	110.8
3	Պետական տուրք	49684.5	51855.8	104.4	46770.0	42522.9	90.9	-9332.9	82.0
4	Տեղական տուրք	111075.0	111212.3	100.1	105166.3	108460.0	103.1	-2752.4	97.5
5	Գույքի վարձ. վճար	221285.0	229576.0	103.7	222044.6	229694.5	103.4	118.5	100.1
6	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	5170.0	4968.6	96.1	8278.8	5596.8	67.6	628.2	112.6

7	Տեղական վճարներ	259143.5	233832.3	90.2	243460.1	220279.6	90.5	-13552.6	94.2
8	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	2611.0	2859.0	109.5	2586.0	2966.1	114.7	107.0	103.7
9	Մուտքեր տույժերից, տուգանքներից	5070.0	3489.9	68.8	4800.0	4187.8	87.2	698.0	120.0
10	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	400.0	400.0	100.0	0.0	1500.0	#DIV/0!	1100.0	375.0
11	Այլ եկամուտներ	40920.6	45528.3	111.3	40417.4	47769.4	118.2	2241.1	104.9
12	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	3918262.0	3918249.1	100.0	4293507.1	4286398.6	99.8	368149.5	109.4
13	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	64628.9	64584.7	99.9	80606.0	80586.5	100.0	16001.8	124.8
14	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	115714.3	113247.4	97.9	137853.9	136220.3	98.8	22972.9	120.3
ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից						-1609.0		-1609.0	
Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ		5718386.9	5716192.1	100.0	6177498.2	6164686.4	99.8	448494.3	107.8
15	Տարեսկզբի ազատ մնացորդ	6931.9	6931.9	100.0	28308.9	28308.9	100.0	21377.0	408.4
Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր		5725318.8	5723124.0	100.0	6205807.1	6192995.3	99.8	469871.3	108.2
1	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կտրավարման այլ մակարդակներից	175710.1	170944.1	97.3	222867.5	233231.6	104.7	62287.5	136.4
2	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	123777.1	106399.6	86.0	119288.0	83241.4	69.8	-23158.2	78.2
3	Այլ մուտքեր	4000.0	4000.0	100.0	18131.0	17600.7	97.1	13600.7	440.0
ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի ֆոնդային մասից							#DIV/0!	0.0	#DIV/0!
Ֆոնդային բյուջեի եկամուտներ		303487.2	281343.7	92.7	360286.5	334073.7	92.7	52730.0	118.7
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	469808.6	469808.6	100.0	550468.1	550468.1	100.0	80659.5	117.2
Ֆոնդային բյուջեի մուտքեր		773295.7	751152.3	97.1	910754.6	884541.8	97.1	133389.5	117.8
Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ		1619381.6	1619710.9	100.0	1665531.2	1661590.0	99.8	41879.1	102.6
Ընդամենը բյուջեի եկամուտներ		5898097.0	5891136.2	99.9	6418496.7	6415518.7	100.0	524382.5	108.9
Ընդամենը բյուջեի մուտքեր		6374837.4	6367876.7	99.9	6997273.7	6994295.7	100.0	626419.0	109.8

Համայնքների սեփական եկամուտները 2015թ. կտրվածքով կազմել է 1661.6 մլն դրամ, 2014թ.-ի 1619.7 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2014թ-ի նկատմամբ կազմել է 102.6%, բացարձակ աճը 2014-ի նկատմամբ՝ 41.9 մլն. դրամ: Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 99.8%-ով՝ նախորդ տարվա 100.0%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 92.7%-ով՝ կրկնելով նախորդ տարվա ցուցանիշը:




« Լոռու մարզի համայնքների բյուջեների կատարողականը 2014-2015թթ. . կտրվածքով



Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 105.6%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 104.2%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 105.7%, Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 103.8%, իսկ Գուգարքի տարածաշրջանում պահպանվել է նախորդ տարվա ցուցանիշը::

Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը 45.8%, ապա Թումանյանի տարածաշրջանը 19.5%, Սպիտակի տարածաշրջանը՝ 13.2%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 11.4%, Տաշիրի տարածաշրջանը՝ 10.1%:

2015թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ տարածաշրջանների



2015թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 50 համայնքներում (համայնքների 44.3%-ը, այդ թվում՝ Թումանյանում՝ 14 համայնք, Ստեփանավանում՝ 9 համայնք, Գուգարքում՝ 12 համայնք, Տաշիրում՝ 9 համայնք, Սպիտակում՝ 6 համայնք:

Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների կատարումը 01.01.2016թ. դրությամբ

Համայնքի անվանումը	մինչև 60%	Համայնքի անվանումը	մինչև 80%	Համայնքի անվանումը	մինչև 100%	Համայնքի անվանումը	100% և ավելի
Անտառամուտ	43.2	Նովոսելցովո	67.8	Գուգարք	97.0	ք.Վանաձոր	100.4
		Պաղաղբյուր	62.2	Շահումյան	91.9	Լեռնապատ	104.3
		Ապավեն	69.5	Ձորագյուղ	91.6	Արջուտ	100.4
		ք.Շամլուղ	76.6	Վահագնի	89.9	Բազում	105.8

Դսեղ	69.1	Վահագնաձոր	84.5	Մարգահովիտ	101.5
Մարց	79.1	Ազնվաձոր	87.5	Լերմոնտովո	102.6
Ուռուտ	78.4	Անտառաշեն	83.4	Ֆիլյետովո	101.4
7		Հալլավար	80.4	Դարպաս	101.3
		Լուսաղբյուր	94.6	Ձորագետավան	100.0
		Շիրակամուտ	89.5	Եղեգնուտ	100.2
		Նոր Խաչակապ	93.4	Դեբետ	104.1
		Սարլանջ	90.4	Փամբակ	102.5
		Գոգարան	85.0	Քարաբերդ	106.6
		Ղուրսալի	96.9	ք.Սպիտակ	105.9
		Սարչապետ	98.9	Հարթագյուղ	100.0
		Նորաշեն	99.6	Լեռնանցք	109.3
		Լեռնահովիտ	96.4	Կաթնաջուր	134.3
		Կաթնառատ	97.7	Ծաղկաբեր	117.6
		Բլագոդարնոյե	81.6	Մեծ Պարնի	101.2
		Մեղովկա	85.5	Արևաշող	112.3
		Ձյունաշող	80.1	Սարամեջ	100.0
		Պետրովկա	82.8	Սարահարթ	105.2
		Դաշտադեմ	94.4	Գեղասար	103.9
		Մեղվահովիտ	85.4	Քարաձոր	101.7
		Արծնի	83.5	Շենական	118.8
		Պրիվոլնոյե	86.3	Լեռնական	104.5
		Սարատովկա	87.8	Խնկոյան	104.7
		ք.Ախթալա	91.8	Ջրաշեն	101.0
		Ահիձոր	99.7	ք.Տաշիր	111.7
		Այգեհատ	94.2	Մեծական	118.6
		Արդվի	88.3	Միխայելովկա	100.3
		Արևածագ	92.6	Ձորամուտ	101.5
		Լորուտ	86.9	Ալավերդի	101.1
		Ծաթեր	90.8	ք.Թումանյան	101.5
		Կարմիր Աղեգի	99.0	Աթան	102.5
		Կաճաճկուտ	94.3	Աքորի	104.4
		Հաղպատ	85.3	Թեղուտ	113.1
		Մղարթ	84.8	Ծաղկաշատ	102.2
		Շամուտ	94.7	Հազվի	114.9
		Շնող	91.2	Ճոճկան	126.0
		Քարինջ	89.2	Մեծ Այրում	120.3
		Օձուն	99.7	Նեղոց	129.0
		Կուրթան	99.1	Չկալով	117.2
		Վարդաբլուր	92.2	Ջիլիգա	104.4
		Հոբարձի	83.0	Քարկոփ	124.7
		Գյուլագարակ	84.2	ք.Ստեփանավան	100.4
		Պուշկինո	87.2	Գարգառ	100.0
		Ամրակից	93.7	Բովաձոր	118.3
		Ուրասար	90.0	Լոռի Բերդ	109.8
		Կաթնաղբյուր	82.2	Կողես	100.0
		Սվերդլով	83.5	50	
		Լեջան	93.2		
		Ագարակ	99.7		
		Յաղղան	96.0		
		Հովնանաձոր	87.2		


Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015 թ-ի հունվարի 1-ի դրությամբ սեփական եկամուտները մինչև 60% կատարել էին 2 համայնքներ, 2016 թ-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 1 համայնքներ, նույն ժամանակաշրջանում 60-80% կատարում են ապահովել համապատասխանաբար 14 և 7 համայնքներ, 80-100% համապատասխանաբար 48 և 55 համայնքներ, 100%-ից ավել՝ 49 և 50 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը նվազել է 8-ով, իսկ 80-100%-ից ավել աճել՝ 7-ով, 100%-ից ավել աճել՝ 1-ով: Առանձնապես մտահոգիչ է այն փաստը, որ ըստ վերջին տարիների վերլուծությունների, ցածր կատարողական ապահովող համայնքները հիմնականում անփոփոխ են մնում: Ցածր հավաքագրման պատճառաբանություններում կան բազմաթիվ սյուբեկտիվ գործոններ, որոնցից որպես հիմնականը կարելի է համարել համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու շատ պասիվ և անհետևողական աշխատանքը սեփական եկամուտների հավաքագրման գործում:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետ մեկտեղ նաև անտարբեր և անբավարար աշխատանքի հետևանքով 2015թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ զուտ սեփական եկամուտների մուտքերը զգալիորեն պակասել են հատկապես հետևյալ համայնքներում.


(հազար դրամ)

h/h	Համայնքի անվանումը	Փաստացի մուտքեր		2015թ.փաստացի կատ.% 2014թ-ի նկատմամբ
		01.01.2015թ.	01.01.2016թ.	
1	Դսեղ	14,685.1	11,011.0	75.0
2	Շահումյան	10,685.2	8,166.5	76.4
3	Անտառամուտ	1,198.4	895.9	74.8
4	Վինիձոր	2,959.8	2,104.1	71.1
5	Սարց	3,103.0	2,266.9	73.1
6	Նովոսելցովո	2,358.2	1,682.7	71.4
7	Պաղաղբյուր	1,245.7	974.9	78.3
8	Ապավեն	684.2	534.7	78.2

2014թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը



2015թ ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ եկամտատեսակների



01.01.16թ. դրությամբ մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 20.2%, գույքահարկինը՝ 40.0%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 13.8%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 21.3%, 34.6% և 14.7%-ի դիմաց:

01.01.2016թ. դրությամբ հողի հարկի 362.8 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 336.0 մլն դրամ, կամ 92.6%, (2014թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 99.7%) որը նախորդ

տարվա փաստացի մուտքերից պակաս է 1.1 մլն. դրամով, գույքահարկի 629.2 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 664.2 մլն դրամ, կամ 105.6%, (2014թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 110.8%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 64.8 մլն. դրամ:

Հողի հարկի հավաքագրումը հատկապես ցածր է հետևյալ համայնքներում (մինչև 70%).  
 հազար դրամ

Հ/Հ	Համայնքի անվանումը	01.01.16թ.		
		պլան	փաստ	%
1	2	3	4	5
1	Անտառամուտ	1,105.5	264.1	23.9
2	Դսեղ	7,915.5	4,809.2	60.8
3	Կաճաճկուտ	358.4	212.7	59.3
4	Մղարթ	2,297.5	1,544.5	67.2
5	Զյունաշող	2,507.8	1,572.5	62.7
6	Պաղարքյուր	961.6	410.1	42.6
7	Դաշտաղեմ	1,720.7	1,080.3	62.8
8	Պրիվոլնոյե	2,944.2	1,838.2	62.4
9	Շիրակամուտ	4,413.6	2884.4	65.4
10	Ուռուտ	8,755.6	5,486.9	62.7

Հողի հարկի հավաքագրումը հատկապես վատ է Տաշիրի տարածաշրջանում՝ 85.7% , 70%-ից ցածր մուտքագրում ունեն Տաշիրի տարածաշրջանում 4 համայնք, Թումանյանի տարածաշրջանում 3 համայնք, Գուգարքի, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջաններում 1-ական համայնք,:


Նույն ժամանակահատվածում հողի հարկի հավաքագրումը նախատեսվածի 80%-ը գերազանցում է 93 համայնքներում, որից 100%-ը 52 համայնքներում:

Հ/Հ	Համայնքների անվանումը	01.01.16թ.		
		պլան	փաստ.	%
1	Ստեփանավան	9,851.3	11,530.9	117.0
2	Կուրթան	6,225.5	6,227.8	100.0
3	Լոռի Բերդ	949.8	969.5	102.1
4	Լեջան	3,739.0	3,766.3	100.7
5	Ագարակ	4,178.2	4,178.2	100.0
6	Յաղդան	2,500.3	2,500.7	100.0
7	Հովնանաձոր	352.0	356.8	101.4
8	Լեռնապատ	4,000.0	4,002.4	100.1
9	Բազում	1,247.9	1,334.9	107.0
10	Մարգահովիտ	7,263.6	7,298.4	100.5
11	Լեյրմոնտովո	3,353.1	3,446.3	102.8
12	Ֆիդլետովո	4,622.1	4,717.7	102.1
13	Ձորագետավան	63.9	64.4	100.8
14	Եղեգնուտ	1,470.5	1,471.2	100.0
15	Դերբետ	1,537.4	1,541.0	100.2
16	Փամբակ	181.4	186.1	102.6
17	Վահագնաձոր	316.0	331.0	104.7
18	Հալլավար	514.6	535.7	104.1
19	Ալավերդի	4,613.5	4,624.4	100.2
20	Ախթալա	523.3	637.5	121.8
21	Թումանյան	862.5	867.8	100.6
22	Շամլուղ	241.4	324.2	134.3
23	Աթան	1,975.5	2,061.5	104.4
24	Ահնիձոր	989.9	990.8	100.1
25	Արևածագ	4,626.7	4,642.3	100.3
26	Աքրոի	1,486.4	1,507.7	101.4
27	Թեղուտ	1,614.3	1,895.6	117.4
28	Ծաղկաշատ	885.0	887.3	100.3
29	Կարմիր Աղեգի	1,190.2	1,193.3	100.3
30	Հազվի	870.8	871.6	100.1
31	Հաղպատ	912.6	945.5	103.6
32	Մեծ Այրում	5,468.7	5,498.8	100.6
33	Նեղոց	199.6	221.7	111.1
34	Շնող	8,470.4	9,915.4	117.1
35	Չկալով	1,043.5	1,062.7	101.8
36	Զիլիգա	346.5	360.3	104.0
37	Քարկոսի	50.0	119.4	238.9

38	Օծուն	15,026.0	15,026.8	100.0
39	Կաթնատատ	245.3	267.4	109.0
40	Ձորամուտ	2,179.9	2,205.5	101.2
41	Ապավեն	282.1	283.0	100.3
42	Սպիտակ	4,200.0	4,355.6	103.7
43	Լեռնանցք	1,559.2	1,704.7	109.3
44	Կաթնաջուր	5,504.6	5506.0	100.0
45	Մեծ Պարնի	15,542.0	15,560.9	100.1
46	Սարահարթ	2,111.3	2,113.2	100.1
47	Գեղասար	2,230.0	2,241.0	100.5
48	Նոր Խաչակապ	1,433.5	1,477.1	103.0
49	Շենավան	1,075.6	1,174.0	109.2
50	Լեռնավան	1,203.1	1,205.8	100.2
51	Ջրաշեն	5,098.3	5,142.1	100.9
52	Ղուրսալի	1,137.3	1,218.6	107.2

Հողի հարկի հավաքագրումը 2014թ. համեմատությամբ նվազել է 63 համայնքներում, կամ համայնքների 55.8%, այդ թվում՝ Գուգարքի տարածաշրջանում՝ 13, Սպիտակի տարածաշրջանում՝ 13, Տաշիրի տարածաշրջանում՝ 9, Թումանյանի տարածաշրջանում՝ 15, Ստեփանավանի տարածաշրջանում՝ 13 համայնքներ:

Վերջին 5 տարիների ընթացքում հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



**ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի հարկի հավաքագրումը 2011-2015թթ. (մլն. դրամ)**

Գույքահարկի հավաքագրման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 105.6%, Սպիտակի տարածաշրջանում՝ 116.5%, Տաշիրի տարածաշրջանում՝ 118.2%, Գուգարքի տարածաշրջանում՝ 105.2%, Թումանյանի տարածաշրջանում՝ 98.1% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 96.3%:

Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 95 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 57 համայնքներ.

Դ/Դ	Համայնքների անվանումը	01.01.16թ.		
		այլան	փաստ.	%
1	Ստեփանավան	38,899.8	39,069.1	100.4
2	Գար-գար	1,975.2	1,996.9	101.1
3	Ուրասար	285.0	288.5	101.2
4	Լոռի Բերդ	352.8	385.7	109.3
5	Ագարակ	1,773.1	1,778.9	100.3
6	Յաղան	58.8	65.0	110.6
7	Կողես	673.5	773.2	114.8
8	Վանաձոր	320,000.0	340,032.7	106.3
9	Լեռնապատ	1,951.2	1,952.1	100.0
10	Բազում	2,519.5	2,542.1	100.9
11	Մարգահովիտ	5,833.6	5,848.3	100.3
12	Լերմոնտովո	787.1	787.9	100.1
13	Ֆիդլետովո	1,631.2	1,632.0	100.0

14	Դարպաս	2,757.8	3,035.7	110.1
15	Ձորագյուղ	232.0	256.9	110.7
16	Ձորագետտավան	654.7	654.8	100.0
17	Եղեգնուտ	802.2	806.2	100.5
18	Դեբետ	549.6	577.1	105.0
19	Փամբակ	684.9	684.9	100.0
20	Ալավերդի	38,333.4	38,638.9	100.8
21	Թումանյան	2,659.9	2,735.6	102.8
22	Շամլուղ	972.4	991.2	101.9
23	Ահնիձոր	329.6	343.1	104.1
24	Արդվի	152.6	155.7	102.0
25	Աքրի	1,644.5	1,937.7	117.8
26	Թեղուտ	2,341.8	2,641.3	112.8
27	Ծաղկաշատ	206.8	249.3	120.5
28	Հազվի	312.2	562.5	180.2
29	Հաղպատ	1,475.4	1,895.1	128.4
30	Մարց	579.4	586.1	101.2
31	Մեծ Այրում	690.0	705.3	102.2
32	Շամուտ	343.9	357.3	103.9
33	Ջիլիզա	257.3	292.9	113.8
34	Քարկոփ	600.8	666.8	111.0
35	Օձուն	8,965.9	8,966.5	100.0
36	Տաշիր	21,493.7	28,734.6	133.7
37	Մեծավան	6,623.3	9,356.9	141.3
38	Սարչապետ	4,084.5	4,157.0	101.8
39	Միխայլովկա	555.9	716.8	128.9
40	Նովոսելցովո	143.4	157.5	109.8
41	Արձնի	279.2	427.9	153.3
42	Պրիվոլնոյե	976.2	1,193.8	122.3
43	Սպիտակ	38,770.0	44,501.6	114.8
44	Լեռնանցք	2,134.4	2,349.5	110.1
45	Կաթնաջուր	2,603.9	5,720.2	219.7
46	Ծաղկաբեր	1,875.0	2,295.0	122.4
47	Մեծ Պարնի	3,248.7	3,373.7	103.8
48	Շիրակամուտ	2,263.7	2,730.1	120.6
49	Արևաշող	2,321.4	3,351.4	144.4
50	Սարամեջ	1,746.4	1,882.6	107.8
51	Սարահարթ	2,050.5	2,326.6	113.5
52	Գեղասար	1,418.7	1,608.2	113.4
53	Քարաձոր	400.0	730.9	182.7
54	Շենավան	712.7	1,013.8	142.2
55	Լեռնավան	1,900.3	1,909.9	100.5
56	Խնկոյան	355.4	404.7	113.9
57	Ջրաշեն	2,955.0	2,996.6	101.4


Գույքահարկի հավաքագրումը հատկապես ցածր է հետևյալ համայնքներում (մինչև 60%).

Գ/Գ	Համայնքների անվանումը	01.01.16թ.		
		այլամ	փաստ.	%
1	Անտառամուտ	392.8	125.8	32.0
2	Ազնվաձոր	459.3	179.5	39.1
3	Կաճաճկուտ	400.0	226.9	56.7
4	Ապավեն	192.4	104.7	54.4
5	Հովնանաձոր	286.2	167.5	58.5

Գույքահարկի հավաքագրման ծավալները 2014թ. համեմատությամբ նվազել է 34 համայնքներում, այդ թվում նվազումը հատկապես մեծ է Փամբակ, Քարաբերդ, Նովոսելցովո, Ղուրսալի համայնքներում:

Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները ըստ տարածաշրջանների աճել են Տաշիրում՝ 108.2%, Գուգարքում՝ 106.5%, Ստեփանավանում՝ 120.1%, Սպիտակում՝ 116.4%, Թումանյանում՝ 121.7%:

Վերջին 5 տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



**ՀՀ Լոռու մարզի համայնքների գույքահարկի հավաքագրումը 2011-15թթ. (մլն. դրամ)**

2014թ.-ի համեմատությամբ աճել է մի շարք եկամտատեսակների հավաքագրումը՝ գույքահարկի գծով՝ 110.8%, հողի և գույքի վարձակալության վճարների գծով՝ 100.1%, սակայն ըստ եկամտատեսակների թերակատարվել են հողի հարկի գծով՝ 99.7%, պետական տուրքի գծով՝ 82.0 %, տեղական տուրքի գծով՝ 97.5%, ընդհանուր արդյունքում համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարողականը աճել է կազմելով 102.6%, արդյունքում համայնքների 2015թ. կտրվածքով բյուջեներով նախատեսված ծախսերը հիմնականում կատարվել են:

2015թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 222.0 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է 229.7 մլն. դրամ կամ 103.4%, (2014թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 100.1%, որը նախորդ տարվանից ավել է հավաքագրված 118.5 հազ. դրամ:

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 103.1%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 100.1%-ի դիմաց, սակայն փաստացի հավաքագրումը նվազել է 2.8 մլն. դրամով: 2015թ. ընթացքում տեղական տուրքերի գծով մուտք չեն ունեցել 10 համայնք:

Պետական տուրքի գանձումը կազմել է 90.9%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 9.3 մլն. դրամով:

2015թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 3,901,085.4 հազ. դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով: 2015թ. ընթացքում պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացվել է այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին 283,102.1 հազար դրամ:

2015թ. նոյեմբերի 12-14 ուժեղ քամիներից տուժած Լոռու մարզի համայնքներին պետական բյուջեից հատկացվել է 102 725.0 հազ. դրամ, որը բաշխվել է 46 համայնքների անհատական տների և բազմաբնակարան շենքերի վնասները փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև 17 համայնքների համայնքային ենթակայության շինությունների վնասները փոխհատուցելու նպատակով հատկացվել է 58532.0 հազ. դրամ:

2015թ. պետական բյուջեից կապիտալ շինարարության գծով համայնքներին հատկացվել է 142.197 հազ. դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: Նշված գումարների շրջանակներում կնքվել են համապատասխան պայմանագրեր, ապահովվել է գործընթացի իրականացումը:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2015թ-ի համար նախատեսվել են 6205.8 մլն. դրամ, 01.01.2016թ. դրությամբ փաստացի վճարվել է 5913.9 մլն. դրամ, կամ 95.3 %, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել է 910.8 մլն. դրամ, որից վճարվել է 494.1 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 54.2%-ով:

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
-----	-------------------	---------------------	-----------------	------------	-------------------

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2321041.5	2206049.1	95.0	37.3
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱԻՀ)	540.0	356.4	66.0	0.0
3	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ,ԱՆՎՏԱՆԳ. ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	183684.6	175248.1	95.4	3.0
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	621008.1	608632.7	98.0	10.3
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	305414.8	293925.1	96.2	5.0
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	5904.1	5604.0	94.9	0.1
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	548052.8	529804.1	96.7	9.0
9	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1766986.1	1728909.8	97.8	29.2
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	289887.7	275749.8	95.1	4.7
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	163287.5	89620.7	54.9	1.5
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	119288.0	83241.4	69.8	1.4
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		6205807.2	5913899.9	95.3	93.5
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	284721.3	168373.9	59.1	34.1
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	56840.6	-53288.3	-93.8	-10.8
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	165660.1	130109.4	78.5	26.3
4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	261514.5	173530.0	66.4	35.1
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	625.0	0.0	0.0	0.0
6	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	76353.1	33177.8	43.5	6.7
7	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	52275.2	42176.0	80.7	8.5
8	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	12765.0	0.0	0.0	0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		910754.7	494078.7	54.2	7.8
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		6997274.0	6324737.2	90.4	

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 49890.9 հազար դրամ, որը ամբողջությամբ Վանաձոր համայնքի պարտքն է:

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ



## Մարզպետարանի ապարատի պահպանության հետ կապված աշխատանքներ

1. Մարզպետարանի պահպանման ծախսերի նախահաշիվների կազմում, ընդունում
2. Ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում
3. Միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմում, ներկայացում
4. Իրավական ակտերի, գրությունների նախագծերի կազմում
5. Սոցիալական փաթեթի ծրագրով փաստաթղթային ապահովում և ֆինանսավորման իրականացում
6. Մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական և գանձապահական գործառույթների իրականացում

2015թվականին 2014թվականի համեմատությամբ մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը աճել են շուրջ 117.5 մլն դրամով կամ 25.9 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին օրենքի գործողության արդյունքում համակարգի աշխատակիցների աշխատավարձերի աճով: Նախատեսվում է, որ 2016 թվականին պահպանման ծախսերը 2015թվականի համեմատ կավելանան 9.3մլն. դրամով կամ 1.6 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի բնականոն աճով և էլեկտրաէներգիային սակագնի թանկացմամբ:

Հետևողականորեն աճել են նաև ճանապարհների սպասարկման, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման, այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման, ազգային նվազարանների ուսուցման վարձավճարների փոխհատուցման, թանգարանի պահպանման, նախադպրոցական կրթության, հանրակրթական, ներառական և հատուկ ուսուցման գծով ֆինանսավորման ծավալները: Նախորդ տարվա համեմատ աճել է նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված գումարները՝ 2014թվականի 114664.0 հազ. դրամի փոխարեն 2015թվականին հատկացվել է 848128.5 հազ. դրամ: Հաստատուն է մնացել մշակութային միջոցառումների ֆինանսավորման ծավալը:

2015թ-ին 2014թվականի համեմատ նվազել են կրթական հիմնարկների շինարարության և պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման հոդվածներով կատարվող ծախսերը:

Ստորև ներկայացվում է 2014-2015թթ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորված և 2016թ.-ին նախատեսված գումարները.

	2014թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	2015թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	2016թ. նախատեսված (հազ. դրամ)
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	454063.7	571620.4	580934.6
Հանրակրթական ուսուցում	5881762.6	6235951.4	6416969.3
Ներառական կրթություն	166395.8	281184.0	369438.4
Հատուկ կրթություն	109017.7	115149.8	115765.1
Նախադպրոցական (կրթություն)	32930.7	41128.6	46120.1

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	7947.1	8311.8	198.1
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	28357.8	38943.5	38943.5
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	278.1	278.1	278.1
Կրթական հիմնարկների եւ օբյեկտների շինարարություն	213903.8	144290.3	125000.0
Թանգարանային ծառայություններ	13195.1	16157.6	16288.8
Թատերական ներկայացումներ			
Մշակութային միջոցառումների իրականացում	3542.3	3542.3	3542.3
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	114664.0	848128.5	0
Մարզային նշանակության ա/ճ-ների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում	69043.7	71400.0	75000.0
Պետական նշանակության ա/ճ-ների և) հիմնանորոգում	435892.5	270262.6	0
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	520434.2	291616.3	304344.0
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում	0	3600.0	3870.0
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	396181.2	283102.1	0
<b>Ընդամենը</b>	<b>8447610.3</b>	<b>9224667.3</b>	<b>8096692.3</b>

Ընդամենը պետական բյուջեից ֆինանսավորումը նախորդ տարվա 8.447.610.3 հազ. դրամի փոխարեն 2015թվականին կազմել է 9.224.667.3 հազ. դրամ՝ կամ աճը կազմել է 9.2 տոկոս: 2016թ. համար նախատեսվող գումարները որոշակի նվազել են և սահմանված է 8.096.692.3 հազ. դրամ, սակայն տարվա ընթացքում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվող գումարների հաշվին կավելանան մարզին ֆինանսավորվող գումարները:

## Կրթության ոլորտ

Լոռու մարզպետարանի ենթակայության 150 հանրակրթական դպրոցների, մեկ հատուկ դպրոցի և մեկ թանգարանի ֆինանսատնտեսական գործունեության սպասարկման, համակարգման և վերահսկողություն շրջանակներում իրականացվել են հետևյալ գործառույթները.

1. Հանրակրթական ծառայությունների գնման պայմանագրերի կնքում

2. Պայմանագրերի քաղվածքների և ժամանակացույցերի կազմում և մուտքագրում էլեկտրոնային client-treasury համակարգ
3. Պահպանման ծախսերի նախահաշիվների ընդունում, ճշգրտում, ստուգում և ամփոփում
4. Ամենամյա ֆինանսավորման կատարում
5. Ամսեկան, եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների ընդունում, ստուգում, ամփոփում և ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն
6. Աշակերտների թվի փոփոխության հետ կապված բյուջեի ճշտում, համաձայնագրերի, վճարման ժամանակացույցերի կազմում, հաստատում և մուտքագրում client-treasury համակարգ
7. 2016-2018թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի կրթության ոլորտի ֆինանսավորման պլանային ցուցանիշների հաշվարկ և ներկայացում ՀՀ ՖՆ
8. Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարիֆիկացիոն մատյանների ստուգում և աշխատակիցների աշխատանքի վարձատրության հարցերով համապատասխան մեթոդական օգնության տրամադրում
9. Գույքագրման մատյանների ընդունում

2015թվականին 2014թվականի համեմատ աճել է մարզի հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման ծավալները շուրջ 7.8 տոկոսով (6.198.332.0 հազ. դրամի փոխարեն կազմելով 6.682.003.7 հազ. դրամ), ինչը պայմանավորված է 2015թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ կապված աշակերտ թվով ֆինանսավորման բանաձևում 1 աշակերտի համար նախատեսված գումարի ավելացմամբ, և պահպանման ծախսերի գումարի հաշվարկման նոր սանդղակի և սահմանաչափերի կիրառմամբ: 2016թ. պետական բյուջով նախատեսված է ֆինանսավորում 6948769.1 հազ. դրամ, կամ աճը 2015թ. նկատմամբ կազմում է 4.0 տոկոս:

Նախորդ տարվա համեմատ 2015թվականին 37.3 տոկոսով աճել է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում գումարները(28357.8 հազ. դրամի փոխարեն կազմել է 38943.5 հազ. դրամ): 2016թվականին գումարի չափը պահպանվել է:

Բաժնի աշխատակիցների կողմից իրականացվում է նաև թանգարանի, հատուկ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության ապահովումը և վերահսկողությունը, ինչպես նաև մարզի լեռնային, հեռավոր, սահմանամերձ բնակավայրերի դպրոցներին մանկավարժական կադրերով ապահովման և ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում ծրագրերի ֆինանսատնտեսական ապահովումը:

Գանձապետական համակարգի տարածքային ստորաբաժանումների վերացման և էլեկտրոնային գանձապետական համակարգի ներդրման արդյունքում բավականին ավելացել են բաժնի աշխատակիցների կողմից իրականացվող գործառնությունները և հետևապես ծանրաբեռնվածությունը:

## **Առողջապահության ոլորտ**

Առողջապահության ոլորտում մարզպետարանի ենթակայության գործող 16 ՓԲԸ-ների, 15 ՊՈԱԿ-ների և 5 համայնքային առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական

գործունեության գնահատման և վերահսկման առումով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ընդունվել, ստուգվել և հաստատվել են 2015 թվականի նախահաշիվները և դրանցում կատարվող փոփոխությունները
2. Ընդունվել, ստուգվել և ամփոփվել են 2014թվականի և 2015թվականի ֆինանսատնտեսական հաշվետվությունները
3. Ընդունվել, ստուգվել և ամփոփվել են 2014 և 2015թվականների տարեկան մոնիտորինգի ցուցանիշների մասին հաշվետվությունները
4. Կազմվել են 2016-2018թթ. միջնաժամկետ հեռանկարում ՀՀ պետական բյուջե շահաբաժինների գծով վճարման ենթակա տարեկան գումարների կանխատեսումների մասին հաշվետվություն, ինչպես նաև կատարվել են 2014թվականի գործունեության արդյունքում ստացված շահույթից պետական բյուջե վճարման ենթակա շահաբաժինների հաշվարկ և ապահովվել է սահմանված ժամկետում դրանց վճարման գործընթացը
5. Մարզպետարանի համակարգի առևտրային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վատթարացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել է վերլուծություն և ներկայացվել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն
6. Ընդունվել է առողջապահական ընկերությունների եկամուտների և ծախսերի մասին ամենամսյա հաշվետվություններ

2015 թվականին 2014-ի համեմատ ոլորտի ընկերություններում պետական պատվերի գումարը ավելացել է 8.3 տոկոսով, իսկ վճարովի ծառայություններից ստացվող մուտքերը 2015 թվականին ավելացել են 5 տոկոսով: 2015 թվականին 2014-ի համեմատ ավելացել է պետական բյուջե վճարվող շահաբաժինների ծավալը շուրջ 28.5 տոկոսով:

	2013թ. /2012թ. համար/	2014թ. /2013թ. համար	2015թ. /2014թ. համար
Պետական պատվեր	2977652.0	3577565.0	3717816.2
Վճարովի ծառայություն	481083.0	502899.0	570895.3
Վճարված շահաբաժին	20338.5	13231.1	17008.2

## Այլ ոլորտներ

### Պետական աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի իրականացում

Սույն ծրագրով 2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատակիցների անհատական տվյալների բազայում/էլեկտրոնային շտեմարան/ կատարվել են համապատասխան փոփոխություններ
2. Ընդունվել, հաստատվել և ամփոփվել են մարզպետարանի և ենթակա ՊՈԱԿ-ների ծախսերի նախահաշիվները

3. Մեթոդական և տեղեկատվական օգնություն է տրամադրվել համակարգի ՊՈԱԿ-ներին
4. Առողջապահության նախարարությունից ստացվել են սոցիալական փաթեթի շահառուների պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման հավաստագրեր, որը հատկացվել է մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներին և մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին
5. Օգնություն է ցուցաբերվել անհատ շահառուների սոցիալական փաթեթից օգտվելու գործընթացում առաջացած խնդիրների լուծման հարցում

2015թվականին 2014թվականի համեմատ պետական աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրով հատկացվող ֆինանսական միջոցները նվազել են, քանի որ մեկ անձին հատկացվող ընդհանուր գումարից հանվել է բժշկական ապահովագրության համար հատկացվող 52.0 հազ. դրամը և բժշկական կանխարգելիչ գնության համար հատկացվող 8.0 հազ. դրամը: Եթե նախորդ տարիներին մեկ դրույք աշխատողին պետական բյուջեից հատկացվում էր 132.0 հազ. դրամ, ապա 2015թ. այն սահմանվել է 72.0 հազ. դրամ:

2015թվականին պետական աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրում իրականացվել են արմատական փոփոխություններ, որի արդյունքում ավելացել է բաժնի կողմից այս ծրագրով իրականացվող գործառույթների թիվը:

### Սոցիալական փաթեթի ֆինանսավորման գումարները և շահառուների թիվը

	2014թ.	2015թ.	2015թ.-ին 2014թ.-ի նկատմամբ
Պետական բյուջեից հատկացված գումարներ /հազ. դրամ/	520434.2	291616.3	56.0
Շահառուների թիվ	4512	4680	103.7

### Վարչական հսկողություն

2015թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված էր իրականացնել վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի 39 համայնքներում, որը իրականացվել է ամբողջությամբ:

Հսկողության արդյունքում կազմվել են համապատասխան արձանագրություններ: Արձանագրությունները քննարկվել են մարզպետարանում և արձանագրված խախտումների և թերությունների վերացման վարաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Վարչական հսկողության ֆինանսական բնագավառի հարցաշարերի հասմապատասխան չեն պահպանվել կամ թերի են պահպանվել

1.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2.1 և 2.2 կետի պահանջները, ըստ որի համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններից է տեղական հարկերը, տուրքերը և վճարները գանձումն ու վերահսկումը, չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառումը: Թերացման հետևանքով կուտակվում է հողի հարկի և գույքահարկի գծով ապառքներ: Ապառքների գանձման վերաբերյալ մարման ժամանակացույցեր հիմնականում չեն կազմվել, դատական կարգով գանձումներ չեն իրականացվել:

2. ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ՏԻՄ մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի

եկամուսնների հաշվառման ու վճարումների ընդունման կազմակերպման կարգի 9-րդ կետի բ/ և գ/ ենթակետերի պահանջները:

3.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի 1-ին կետի, հոդված 69-ի առաջին մասի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 35-ի կետ 1-ի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:

4. «Դրամարկղային գործառնությունների իրականացման» կարգի 15-րդ կետի պահանջը՝ դրամարկղի գիրքը կնքված և համարակալված չէ տարածքային հարկային տեսչության կողմից:

5. ՀՀ կառավարության 29.12.2005թ.թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջը, համաձայն որի գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: Մի շարք համայնքներում առկա են նաև գործուղման գումարների հաշվարկներում անճշտություններ:

6. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 167-րդ և 169-րդ հոդվածի կետ 2-ի պահանջները, համաձայն որի ամենամյա արձակուրդի համար արձակուրդային գումարի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ: Առանձին համայնքներում աշխատողներին հաճախ տվյալ տարում չեն տրամադրվում հերթական արձակուրդներ, ինչի արդյունքում աշխատանքից ազատվելու ժամանակ չօգտագործված արձակուրդի համար ստիպված վճարվում են խոշոր չափի փոխհատուցման գումարներ: Նշված խախտումը առկա է նաև համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ներում:

7. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանու անդամը պարտավոր է չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:

8. «ՏԻՄ» օրենքի հոդված 54.1-ի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում:

9. ՀՀ կառավարության 10.02.2011թ.թիվ 168-Ն որոշում՝ կետ 21-ի պահանջը, ըստ որի մինչև փետրվարի 1-ը չի հաստատվել գնումների պլանը և չի ձեռնարկվել միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանված կարգով այն հրապարակելու համար:

10.«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ կետի պահանջը, համաձայն որի «Տեղական տուրք և (կամ) վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքի կամ վճարի հաշվարկն իրականացնում և տեղական տուրքը կամ վճարը գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը...»:

11. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որի համայնքային ծառայողներին նշանակելու և ազատելու, գործուղելու, նրանց նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրանց պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը:

12. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի ոչ աշխատանքային նախատոնական և հիշատակի օրերին նախորդող աշխատանքային օրվա աշխատաժամանակը կրճատվում է մեկ ժամով: Որոշ դեպքերում աշխատանքի հաճախումների տարելներում առկա են այլ կարգի թերություններ:

13«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի պահանջները: Անաշխատունակության նպաստների հաշվարկներում առանձին դեպքերում առկա են անճշտություններ:

14. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը: Չի պահպանվել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ի պահանջը, ըստ որի աշխատավարձերի ուշացման դեպքում աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

15.«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի գ/ ենթակետի պահանջը, ըստ որի համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

16.Ապրանքանյութական արժեքների ծախսերը հիմնավորող փաստաթղթերը որոշ դեպքերում լրացված են թերություններով և բացթողումներով: Արձանագրվել են նաև անճշտություններ աշխատավարձերի և եկամտահարկերի հաշվարկներում:

Բաժնի կողմից իրականացվել է նաև մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ների և ՊՓԲԸ-ների գույքագրման մատյանների ընդունում, գույքային գործառնությունների (հիմնականում դուրսգրման գործընթացի) նկատմամբ վերահսկողություն և մեթոդական օգնության տրամադրում:

## **Թերություններ**

1.Ոչ բոլոր համայնքներում է կազմվող բյուջեները լինում իրատեսական:  
2.Թերություններ կան հողի հարկի և գույքահարկի բազաների վարման աշխատանքներում:  
3. Համայնքների քառամյա զարգացման ծրագրերը հաճախ հիմք չեն հանդիսանում տվյալ տարվա բյուջեի կազմման գործընթացում:  
4.Համայնքային բյուջեները հիմնականում ծախսային բյուջեներ են (հատկապես գյուղական համայնքների), այն դեպքում երբ առաջիկա մի քանի տարում նախատեսվում է անցնել ծրագրային բյուջետավորման, որտեղ կարևոր տեղ կտրվի բյուջեների քանակական և որակական ցուցանիշներին:  
Առաջարկվում է գործարկել համայնքների ղեկավարների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների գնահատման համակարգ, այդ համակարգում կարևորելով հիմնական եկամտատեսակների հավաքագրման մակարդակը, բյուջեի եկամտային մասում դրանց կարևորությունը: Որի առընչությամբ առաջարկվում է համայնքների սեփական եկամուտների հավաքագրման միջին հավասարակշռված գնահատական ստանալ, ապա դրանից ելնելով համայնքները դասակարգել 4 հիմնական խմբերում՝

1. Արդյունավետ համայնքներ 100 և ավելի տոկոս,
2. Կայուն համայնքներ 90-100 տոկոս,
3. Բացթողումներով համայնքներ 80-90 տոկոս,
4. Խնդրահարույց համայնքներ մինչև 80 տոկոս: